

# Ժողովուրդ

33  
(2699)

7 մարտի երեքշաբթի 2023  
տպագրության ժԲ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## ՆԱԽԱՐԱՐԸ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒՄ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ



ՀՀ Ներքին գործերի նախարարությունը հրաժարվում է տրամադրել հանրային շահ ներկայացնող հարցման պատասխանը՝ խախտելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ քաղաքացու տեղեկացված լինելու իրավունքը: Բանն այն է, որ «Ժողովուրդ» օրաթերթը մարտի 1-ի իր համարում հոդված էր հրապարակել այն մասին, որ ՀՀ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը երթել էր օպերատիվ համարանիշներով, ինչի իրավունքը չունի: «Ժողովուրդ» օրաթերթը նաեւ հարցում էր ուղարկել ՀՀ ոստիկանություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն, թե ով է ԱԺ պատգամավորին տրամադրել այդ համարանիշները, եւ ինչու է նա շրջում օպերատիվ համարանիշներով, եթե չունի դրա իրավունքը: Ի վերջո, դրանք ամենեւին ԱԺ բալանսում գտնվող համարանիշներ չեն, ուժային այլ կառույցներից մեկին է պատկանում (չենք հրապարակում որ մեկին): Եվ, ահա, Ներքին գործերի նախարարության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից ստացել ենք պատասխան. «Ի պատասխան Ձեր՝ 28.02.2023 թ. գրության՝ տեղեկացնում ենք, որ գործող օրենսդրական կարգավորումների ուժով հայցվող տեղեկատվությունը հնարավոր չէ տրամադրել»: Այսինքն՝ նորացված ոստիկանությունը հայտնում է, թե գաղտնի տեղեկություն է հարցվածը: Սա էլ իր հերթին նշանակում է, որ իրականում Անդրանիկ Քոչարյանի ծառայողական ավտոմեքենայի համարանիշները օպերատիվ համարանիշներ են, քանի որ միայն այդ դեպքում է անհայտ, թե պետհամարանիշի տերն ով է: Տեղեկացնենք, որ օպերատիվ պետհամարանիշը ելքադրում է բառի բուն իմաստով անպատիժ երթելու իրավունք: Կարող ես արագ վարել, հոծ գիծ հատել, երկրորդ շարքում կանգնել, մի խոսքով, ինչ ճանապարհատրանսպորտային կանոնների խախտում ուզես՝ կարող ես անել, միեւնոյնն է, չես տուգանվում: Դա պատճառաբանվում է որպես ծառայողական անհրաժեշտություն: Տեսահսկողության խցիկներն էլ օպերատիվ համարանիշներով ավտոմեքենաների խախտումները չեն գրանցում: Խոսքն այս դեպքում 610 ՇՄ 61 համարանիշի մասին է: Ես մեկ անգամ շեշտենք, որ մեր հարցված տեղեկությունը հանրային շահ է հետապնդում, եւ հանրությունն էլ պետք է իմանա, թե ինչու է պատգամավորին այդպիսի համար տրամադրվել: Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, սակայն, որոշել է հովանավորել Անդրանիկ Քոչարյանին՝ թերեւս մտավախություն ունենալով, որ նոր դավեր կարող է նուրբել իր դեմ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում լարվածությունը եւ հակասությունները գնալով խորանում են: Բանն այն է, որ ՔՊ-ականները բաժանված են մի քանի խմբերի. մի թեւը Անդրանիկ Քոչարյանի շուրջ են, մյուսը, այսպես կոչված, նախկին ՀԿ սեկտորի թեւն է, որոնք անվերապահ աջակցում են Արսեն Թորոսյանին, վերջինիս համարում են արդարության առաջամարտիկ, որ համարձակվեց ՔՊ կուսակցության վարչության կեղծված ընտրությունների մասին բարձրաձայնել ներսում, բողոքարկել: Հաջորդը Ալեն Սիմոնյանի թեւն է, եւ կա նաեւ «փաշինյանականների թեւ», որոնք խմբակցության ներսում կատարվող ցանկացած իրադարձություն շտապում են հայտնել Փաշինյանին ՄՄՍ-ներով, որպեսզի նրա աջքին բարձրանան: Ահա այս խմբերը առիթը բաց չեն թողնում տարբեր առիթներով իրար մեղադրելու եւ միմյանց վրա ցեխ շարտելու՝ նաեւ մեղիա տիրույթ նետելով բազմազան լուրեր: Հատկապես լարված են «քոչարյանական» եւ «թորոսյանական» թեւերի հարաբերությունները: Բանն այն է, որ Անդրանիկ Քոչարյանի «աջակիցները» փորձում են ամեն կերպ թուլացնել Թորոսյանի դիրքերը կուսակցության ներսում, ինչպես նաեւ Թորոսյանի հետ կապված հակաարձակ են տանում Փաշինյանի մոտ:



ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորները հունվարի 10-ից համարել են, որ սկսվել է հաշվարկը, ու հենց այդ օրվանից իրենք ունեն երեք ամիս ժամանակ՝ դիմում ներկայացնելու Սեդա Սաֆարյանի գործողության մասով: Եվ, ահա, 3 օրից կլրանա երկրորդ ամիսը, սակայն մինչ օրս ՍԴ որեւէ դատավոր Սեդա Սաֆարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով դիմում չի ներկայացրել Սահմանադրական դատարանի նախագահին: Փոխարենը «Հայաստան» խմբակցությունն է արդեն շրջանառության մեջ դրել Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին նախագիծը: Որպես Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու հիմք՝ նշվում է, որ վերջինս, խախտելով Սահմանադրական դատարանի դատավորի համար սահմանված անհամատեղելիության պահանջները, ձեռնարկատիրությամբ է զբաղվել: Որպեսզի ընդդիմության հեղինակված նախագիծը մտնի ԱԺ լիազույնար նիստերի օրակարգ, այն նախ պետք է երկշաբաթյա ժամկետում արժանանա ԱԺ պետաիրավական հանձնաժողովի հավանությանը, իսկ որպեսզի ԱԺ-ն Սեդա Սաֆարյանի լիազորությունները դադարեցնելու համար պաշտոնապես դիմի ՍԴ, պետք է նախագիծն ընդունվի պատգամավորների ձայների 3/5-ով, այսինքն՝ անհրաժեշտ է լինելու 65 ձայն: Արդեն ակնհայտ է, որ այս նախագիծը հավանության չի արժանանա, եւ ՔՊ-ն կպաշտպանի իր կողմից ընտրված դատավորին: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այս օրերին ՍԴ-ում սպասում են ԱԺ զարգացումներին, թեւեւ կանխատեսելի է, որ խորհրդարանում որեւէ զարգացում էլ չի լինի: Մնում է «ինքնադատաստանի» տարբերակը: ՍԴ-ում քննարկել են, եւ չի բացառվում, որ ՍԴ դատավորների զգալի մասը հավաքվի եւ որոշի, թե ինչ հանգուցալուծում տա Սեդա Սաֆարյանի կողմից կատարված ապօրինի գործողություններին, երբ լինելով դատավոր՝ նաեւ ձեռնարկատիրական գործունեությամբ է զբաղվել:



ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դեռ խորհրդարան չի ներկայացրել նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հաղորդումը: «ԱԺ կանոնակարգ» օրենքի 128-րդ հոդվածը սահմանում է. «Գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «ԱԺ կանոնակարգ»-ի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ գլխավոր դատախազի ներկայացմամբ»: Նույն հոդված 126-ն էլ սահմանում է, որ նախագիծը խորհրդարան ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովում, առանց որեւէ փաստաթղթի ընդունման. երկամսյա ժամկետում՝ խորհրդի սահմանած օրը, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում: Նախորդ տարիների փորձը վկայում է, որ գլխավոր դատախազը հաղորդումը ներկայացնելու համար խորհրդարան կգա մայիս ամսվա հերթական նիստերի ժամանակ: Այստեղ, սակայն, հետաքրքիր է այն, որ Աննա Վարդապետյանը, ըստ էության, իր հաղորդման մեջ ավելի շատ ներկայացնելու է նախորդ դատախազի՝ Արթուր Դավթյանի կատարած աշխատանքը, քանի որ Վարդապետյանն իր պաշտոնը ստանձնել էր սեպտեմբերին: Հետաքրքիր է՝ ինչպես իրենց կորստերն են ՔՊ-ականները. կքննադատեն արդյոք, թե՛ էլի հիացմունքով էլոյթներ կունենան Արթուր Դավթյանի գործունեության մասին:









ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱԿԱԳՆԵՐԻ

Հայաստանի երկաթուղային մուտք հանդիսացող Այրում կայարանի հետ սերտ առնչվող՝ Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշոր համայնքի Այրում քաղաքի բնակիչներից տեղեկացա, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի կողմից սահմանված բարձր սակագների պատճառով շատ գործարարներ, բնակիչներ չեն օգտվում երկաթուղուց: Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի, Լոռու մարզի բնակիչները, որոնք բնակվում են երկաթուղային կայարաններին մոտ բնակավայրերում, Վրաստան մեկնելու համար հիմնականում օգտվում են ավտոտրանսպորտից: Վրաստան առեւտուր անելու մեկնելու համար Տավուշի եւ Լոռու մարզերի բնակիչները երկաթուղու բարձր սակագների պատճառով գերադասում են 4 հոգով մի ավտոմեքենա վարձել ու դրանով, ոչ թե երկաթուղով Վրաստան հասնել: Սադախլոյի երկաթուղային կայարանում «Դյուբի ֆրի» ծառայություն չի գործում, այդ ծառայությունն առկա է Սադախլոյի ավտոմեքենային մաքսային անցակետում: Սադախլոյի երկաթուղային կայարանում մաքսային եւ անձնագրային զննումը երկար շուրջ մեկ ժամ է տևում, որն էլ երկաթուղին ոչ գրավիչ է դարձնում: Դուսաստանից տրանսպորտային միջոցները, այլ գույքը՝ երկաթուղով Հայաստան ներկրելու վճարը թանկ է, այդ պատճառով Հայաստանի բնակիչները գերադասում են դրանք տեղափոխել բեռնատարներով, ոչ թե երկաթուղով: Հարավկովկասյան երկաթուղու ծառայությունների սակագները բարձր են, քանզի երկաթուղու տնօրինությունն օգտվում է տրանսպորտի ոլորտում ունեցած մենաշնորհից:

ԼՈՒԾԱՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«Վեոլիա ջուր» ՓԲԸ ներկայացուցիչը 2022թ. մայիս 16-ին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ «ՀՀ Տավուշի մարզի Այրումի համայնքապետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի՝ 2 միլիոն 389 հազար 900 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջով: 2021թ. դեկտեմբերի 5-ին կայացել են Նոյեմբերյան խոշոր համայնքի ավագանու համամասնական ընտրություններ, Այրում խոշոր համայնքը ներառվել է առավել խոշորացված Նոյեմբերյան համայնքի կազմի մեջ: «Վեոլիա ջուր» ՓԲԸ ՓԲԸ-ի հայցադիմումը Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022թ. հունիսի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: 2023թ. հունվարի 1-ին նշանակված նախնական դատական նիստի ընթացքում դատավոր Աշոտ Զավախյանը արձանագրային որոշմամբ կատարել է պատասխանող կողմի փոփոխություն՝ իրավահաջորդության հիմքով՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքին ներառելով որպես պատասխանող կողմ: Սույն քաղաքացիական հայցով ապրիլի 5-ի Տավուշի մարզի դատարանի Դիհչանի նստավայրում նշանակված է նախնական դատական նիստ:

ՈՍՎԱՆ ՍՈՐՈՑՅԱՆ Տավուշ

ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ

ՄԱՀՄԱՆՎԱԾ ԱՆՁՆԱԳԻՐԵՐ

ՀՀ քաղաքացիները սահման են նույնականացման քարտեր եւ ՀՀ կառավարության՝ 25.12.1998 թ. թիվ 821-Ն որոշմամբ սահմանված անձնագրեր:

ՆԳՆ տարածած հաղորդագրության մեջ ասվում է. «Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ամբողջությամբ կենսաչափական համակարգի անցման քաղաքականություն ՀՀ քաղաքացու անձը հաստատող բացառապես կենսաչափական տվյալներ պարունակող փաստաթղթեր տրամադրելու համար:

Այդ նպատակով ընթանում են բարեփոխումներ, որոնց արդյունքում նախատեսվում է տրամադրել նոր սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված՝ անձը հաստատող կենսաչափական փաստաթղթեր ինչպես ՀՀ քաղաքացիներին, այնպես էլ ՀՀ-ում օրինական բնակության իրավունք ունեցող այլ անձանց՝ աստիճանաբար հին անձնագրերը փոխարինելով նորերով:

Նշված հանգամանքով պայմանավորված՝ 2023 թվականի հունվարի 1-ից մեկ տարի ժամկետով դադարեցվել է կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրումը, իսկ նույնականացման քարտերը 2023 թվականի փետրվարի 15-ից տրամադրվում են առանց էլեկտրոնային պահոցի մինչև նոր՝ անձը հաստատող կենսաչափական փաստաթղթերի ձեռք բերումն ու քաղաքացիներին տրամադրելը (ՀՀ ոստիկանությունը շրջանառության մեջ է դրել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» եւ «Նույնականացման քարտերի մասին» օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթ, որոնք ընդունվել են ուժի մեջ են մտել 30.12.2022 թվականից):

Վերը նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել կատարել



ծրագրային փոփոխություններ, ինչի հետևանքով համակարգը երբեմն խափանվում էր, եւ հնարավոր չէր լինում ձեւակերպել ու թողարկել նույնականացման քարտերը:

Խափանումները կարող էին տեւել մի քանի ժամից մի քանի օր, ինչով պայմանավորված՝ նման իրավիճակներում անձնագրային ծառայություններին հանձնարարվել էր նույնականացման քարտեր չձեւակերպել կամ ձեւակերպել, սակայն սեղմ ժամկետում ծառայությունների մատուցման պայմանագրեր չկնքել:

Բացի այդ, հաշվի առնելով առկա նույնականացման քարտերի բլանկների սղու-

թյունը՝ մինչև նոր նույնականացման քարտի ձեռք բերումը եւ 2023 թվականի փետրվարի 15-ից քաղաքացիներին տրամադրումը դրանք տրվել են որոշակի սահմանափակումներով եւ հիմնականում այն անձանց, որոնք իրականացնում են այնպիսի գործունեություն, որի համար օրենսդրությամբ սահմանված է էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման անհրաժեշտություն:

2023թ. փետրվարի 15-ից ՀՀ քաղաքացիները ստանում են նույնականացման քարտեր եւ ՀՀ կառավարության՝ 25.12.1998թ. թիվ 821-Ն որոշմամբ սահմանված անձնագրեր»:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԱՆՎՃԱՐ ԲԻԶՆԵՍ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

«Ակբա» բանկը Հայաստանում Գերմանիայի բնության դաշտանության միության (NABU) հետ համատեղ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության զարգացման ծրագրի Կառավարման համար իրականացրել է եռօրյա բիզնես դասընթացներ: Բիզնես դասընթացների թեմաները եղել են «Ծախսերի վերահսկողությունը», «Գրամական հոսքերի կառավարում» ու «Թվային մարքեթինգը», որոնց արդյունքում մասնակիցները բիզնեսի օրհիմնա կառավարման համար ստացել են ռեզյումեներ եւ գործնական գիտելիքներ, մարքեթինգային մի քանի գործիքների կիրառման հմտություններ: Գասընթացները վարել են բանկի փորձառու աշխատակիցները:



«Ակբա» բանկի բիզնես դասընթացներին հնարավորություն ունեն մասնակցել Հայաստանում գրանցված բոլոր ՓՄՁ-ների ղեկավարները եւ որոշում կայացնող անձինք:

Բիզնես դասընթացները իրականացվում են հետևյալ թեմաներով՝

- Ֆինանսական որոշումների կայացում,
- Բիզնեսի զարգացումը՝ անկայունության պայմաններում,
- Գործնական մարքեթինգ,
- Թվային մարքեթինգ,

- Դրամական հոսքերի կառավարում,
- Ծախսերի վերահսկողություն,
- Շրջանառու կապիտալի ավելացում,
- Բիզնես ցիկլեր եւ ԱՆՊ կառավարում,
- Հյուրատան անձնակազմի մոտիվացում եւ պահպանում,
- Հյուրատանային ծառայությունների մարքեթինգ,
- Հյուրատանային ծառայությունների վաճառք,

- Հոգատարություն հյուրերի հանդեպ:
- «Ակբա» բանկը Հայաստանի փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման նպատակով անվճար բիզնես դասընթացների շարքն իրականացնում է 2013 թվականից: Առ այսօր բանկի կողմից անցկացվել է 124 բիզնես դասընթաց, որին մասնակցել է շուրջ 1800 ՓՄՁ ղեկավար 1000-ից ավելի ընկերություններից: Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 32 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 45-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:







Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ադա ինչդեա է վճարվում նրա կենսաթոշակը:**  
*Գրեաա Հարությունյան (71 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Գ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը:

Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

*Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն*

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Ավելացնենք, որ եթե կենսաթոշակը վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

**ԿՎՐԳ**

**ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչդիսի դարսականություններ ունեն ծառայողական ֆննդության կողմերը:**  
*Վազգեն Սաֆարյան (38 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

- ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,
- բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,
- գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

*Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ*

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

**ԼՈՒՐ ԿՎՐԴ**

*Լուսանկարն արվել է Ռուսաստանի Դաշնությունում*



Հայազգի 15-ամյա մենասահորդուհի Ադելյա Պետրոսյանը դարձել է գեղասահքի ՌԴ Գրան պրիի եզրափակչի հաղթող: Պետրոսյանը հաղթել է եւ կարճ, եւ կամայական ծրագրում: Երկու ծրագրերի հանրագումարում 15-ամյա գեղասահորդը ստացել է 255,01 միավոր (կարճ ծրագրի համար՝ 85,62, կամայականի համար՝ 169,39):

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
 Բաժանորդագրվելու  
 համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ  
 հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ  
 հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
 հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
 Ազգանուն՝ \_\_\_\_\_  
 Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
 Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
 0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը.  
 «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
 Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23  
 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086  
 տրված է 24.11.2010  
 Ստորագրված է տպագրության 6.03.2023  
Պատկերը/Պատկերակազմը/Պատկերակազմի անունը/Պատկերակազմի հասցեն/Պատկերակազմի հեռախոսահամարը/2021

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: